

20.6.28

100. 20A 3.3

05 FEB 2007

ՀՐԱՏԱՐՈՒԿՈՒԹԻՒՆ
ՃՇ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՒՍԿԵՑԻԹ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԿՈՒՍԿԵ-
ՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՁԳԱՑԻՆ ԵՒ
ԱՊԱԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ Է

Տպարան Սանոյեանի, Ալեք-պօլ.
1919 թ.

329, 14
4 - 88

06 AUG 2013

20628

15 JAN 2010

329.14

U-88

ՀԱՅ ԺԱՂԱՔՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՊԵՀԱՍԱԿԱԳՐԳԱՅԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ Է

1

Ծնորհիւ մեկ մօտ գոյութիւն ունեցող քաղաքական ազատութիւններին և ընդհանուր ընտրական սիստեմին, ժողովուրդը սիջոց է ստացել ոչ միայն իր ձայնը լսելի դարձնելու, այլև իր սեփական բազուր տնօրինելու: Քաղաքային խորհուրդների, ազգային հաստատութիւնների և պարլամենտի ընտրութիւններին հանդէս են դալիս բազմաթիւ և առըբեր քաղաքական կուսակցութիւններ:

Հայ մարդը իր քաղաքացիական պարտքը կատարելիս՝ այս կամ այն կուսակցութեան թեկնածուներին ձայն տալիս, կարելք պիտի զգայ պարզելու, թէ ինչ են ներկայացնում իրանցից այդ կուսակցութիւնները և թէ որին կարելի կը լինի յանձնել ժողովուրդի բազուր անօրինական բարեկա պատասխանատու նորմերուն:




28417 +

1129
5029

199

100/6
28417



Հնաբութեան ժամանակ քաղաքացիները աչքի տռաջ են ունենում հըրապարակ իջած կուսակցութիւնների ծրագրները անցեալում, նրանց ունեցած գործունէութիւնը և ներկայումս առաջազրուած պահանջները։ Սակայն գրանով բաւարարուելը բաւական չէ. կուսակցութեան ծրագիրը և գործունէութիւնը ունի խոր հիմք և առհասարակ, իւրաքանչիւր կուսակցութեան ծրագիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կմախք, որին արիւն և մարմին տալու համար հարկաւոր է ոչ միայն կենդանի քաղաքական գործ, այլ և անհրաժեշտ է նրան հիմնաւորել առցիալ փելիսութայական աշխարհայակցով։

Հնաբական պայքարի միջոցին մըրցող քաղաքական կուսակցութիւնների շարքում հանդէս է գալիս մեր կուսակցութիւնը՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ, որ ունի իր ուրոյն ծրագիրն ու գործելակերպը, աշխարհայեցքն ու դէմքը։

Հայ Փողովրդական Կուսակցութիւնը 1917 թիւ սեպտեմբերի 27-ին հայացած Լիճն համագումարում հաստատեց իր ծրագիրը, որի առաջի երկու կետերում իրան յայտաբարում է ազգային եւ ազադասակարգային։

Յայտնի է, որ քաղաքական կեանքը զարգացման ընթացքում իւրաքանչիւր կուսակցութեան ծրագիր ենթակայ է ուղղումների և փոփոխումների. Եթէ կեանքի ստիպողական և արդարացի պահանջների հանդէպ մեր կուսակցութեան ծրագրի որոշ բաժինները փոփոխութեան ենթարկելու լինեն, կասկածից գուրս պիտի համարել, որ յիշատակած երկու առաջնակարգ և հիմնական կէտերը անփռփոփելի և հաստատ են, որովհետեւ գրանցով է, որ մեր կուսակցութիւնը տարբերում է շատ ուրիշ քաղաքական կուսակցութիւններից և գրաւում է իր առանձնայատուկ տեղը նրանց շարքերում։

Հայ Փողովրդական Կուսակցութիւնը

յայտարարում է իրան ապագասահարգային, արգեօք գրանով նա ժխտմամբ է զասակարգերի զոյութիւնը, կամ ընդէմ է դասակարգերի ձգտումնիրին, ինչո՞ւ է վերտքերում դասակարգացին սկզբունքին և արգեօք կարիլի է ապագասակարգային լինել:

Ահա մի ինդիք, որ կարօտ է պարզաբանութիւնն, որովհետեւ սրանով է, որ մեր կուսակցութիւնը մեծառէս տարբերում է բազմաթիւ սօցիալիստական կուսակցութիւններից, որոնք ընդդրկել են դասակարգային աշխարհային և գործունէութիւնն:

Բացի այս, Հայ ժողովրդական կուսակցութիւնը յայտարարել է իրեն ազգային, համազգային, արգեօք բացի ազգութեան գաղափարից, ազգից, ուրիշ հասարակական միաւորութիւն նա չի ճանաչում, օրինակ, ժխտմամբ է նա մարդանատի իրաւունքների պաշտպանութիւնը, կամ եթէ ընդունում է անհատական սկզբունքը, չի անմեմ արգեօք դրանից այն բոլոր

տրամաբանական ծայրայեղ եղբակացութիւնները, որոնք բնորոշում են գաղափարական անհատական անարխիզմը: Այս ևս չափազանց կարեոր և հետաքրքիր է պարզել:

Այսպիսով ուրիմն, մենք տեսնում ենք, թէ ինչպէս մեր կուսակցութեան հասարակական գաղափարները և քաղաքական սկզբունքները շփման մէջ են գոնուում մի կողմից անիշխանականների (անարխիստների) գաղափարների հետ, իսկ միւս կողմից կարօտ են սահմանաբաժանման՝ սօցիալիստական ուղղութիւնների աշխարհայինացքից:

Մեր նպատակից դուրս է քննութեան առարկայ դարձնել բոլոր գործող կուսակցութիւնների ծրագիրներն ու գործելակերպը, մեր համեստ ձգտումնէ հաժառօտ կերպով պարզել մարդկային լուսաւոր հոգու ստեղծագործածան երեք խոշոր և հիմնական գաղափարական ուղղութիւնները, որոնք յայտնի են անիշխանական, սօցիա-

լիստական և աղտատամիտ—ուամկավաբ
(լիբերալ—գեմոկրատիկ) անւան տակ:
Դրանցից իւրաքանչիւրը իրա համար
աշխարհայեացքի և գործունէութեան
հիմաքար է ընդունել հասարակական
միաւորութիւններից (այս սոցիոլոգի-
կական և ազգ—ժողովուրդը:

Դիմենք իւրաքանչիւրին առանձին:

Անհատականութեան սկզբունքը գա-
նազան ժամանակներում տարբեր հա-
ստրակական հոսանքների աշխարհայ-
նացքի և գործունէութեան հիմք է
ծառայել: Այդ սկզբունքը եղել է և
կլասիք (XVIII դ.) լիբերալիզմի հիմ-
նական գողափարը, որը ամփոփուած է
հոչակաւոր Laissez faire laissez pas-
sier (լիակատար ազատութիւն) բանա-
ձևի մէջ:

Սակայն անհատականութիւնը իր
ամենածայրայն արամաբանական եպ-
րակացութիւններին է հանգած գա-
ղափարական անարխիզմի և գլխաւո-
րապէս նրա անհատական ուղղութեան
մէջ:

Անիշխանականներ՝ անզլիացի Գօդ-
վինը, ամերիկացի Տուկէրը, Փրան-
սիացի Պրուդոնը, գերմանացի Շտիր-
ները և ուստիներ Կրօպուկինը և Տօ-
ւուսոյը, չնայած իրանոյ քարոզած
ուսմունքների տարբերութեան, ամե-
նաշերմ պաշտպանն են հանդիսանում
մարդ-անհատի գերագոյն իրաւունք-
ների, նրա քայլաբանակ և անսահման
ազատութեան՝ ընդէմ իշխանութեան
և պետութեան:

Ինչպէս նրանք քարոզում են, ամե-
նուրէք աշխարհում և կետնքի մէջ
գիշերսղ է հանդիսանում անհատա-
կան սկզբունքը, պատմութիւնը ան-
հատի պատագրման պատմութիւնն է
իսկ գիտութեան, գրականութեան, գե-
ղարուեստի մէջ անհատը գտնել է
լայն տոպարէզ իր ձգտումները ար-
տայայտելու: Յանուն անհատի սրբա-
զան իրաւունքների և շահերի նրանք
ժխտում են ոչ միայն պետութեան
գաղափարը, այլև յամառ կոիւ են
յայտարարել իշխանութեան բոլոր

յայտնի ձեռքի դէմ, որպէս իշխանութեան ամենակատազի թշնամիներ:

Անիշխանականներից ամենածայրայնը՝ Մաքս Շաբրները (Կասպար Շմիդտը 1806—1856) իր հոչակաւոր աշխատութեան մէջ՝ «Անհատը և նըրա սիփականութիւնը» (Der Einzige und sien Eigentum) այդ ուղղութեամբ շատ հեռու է պնում, նա առում է «իւրաքանչիւր պիտութիւն բանապիտութիւն է, անկախ նրանից, թէ իշխողը մի է թէ շատ, ինչպէս օրինակ համբագետութեան մէջ, որովհետեւ բոլորն էլ միասեռակ իշխողներ են» և յայտարարում է իրան «պիտութեան ոխներիմ թշնամի», նա ժխտում է հանրային բարիքը. ընդհանուր բարիքը, ասում է նա, իմ բարիքը չէ, որպէսկատ զա ինքնամփան վերին կէան է. ընդհանուր բարիքը կարող է թագաւորել, մինչդեռ նո պէտք է սովոր, «պիտութիւնը կարող է բարգաւաճել, մինչդեռ նո պէտք է կարիք ոգամ»), և Շաբրները պարզում

է իր վերաբերմունքը դէպ արտաքին աշխարիք. «Ես ոչինչ չեմ անում յանուն Աստծոյ, ես ոչինչ չեմ անում յանուն մարդու, աւկայն այն ամենց, ինչ որ ես անում եմ, անում եմ միմիցյն ինձ համար». Շաբրները կատարեալ ծայրայեղութեան մէջ է ընկնում, նա ժիտում է ճշմարտութեան զագախարիք. «Ճինչէ որ զու հաւատում ես ճշմարտութեան, քարոզում է նա, զու չիս հաւատում քեզ, ուստի և զու ստրուկ ես, կրօնասէր մարդ. Ճինչէ որ ինքը ես ճշմարտութիւնը, զու ճշմարտութիւնից էլ բարձր ես, որը քո համեմատութեամբ ոչինչ է»

Յանձին Շաբրների անհատական անիշխանութիւնը անում է իր մաքի ամենաբարձր թոփշքները, նա մարդանհատին իր հետ առնում է անհատ և անութեան զագախարների ամենքարժենները, որտեղ մահկանացու անհատց զգալով զլիի պույտ, վայր է ընկնում դէպի անզունդ և ուշքի զալով տեսնում է իրեն

իրականութեան ծանր պայմաններում:

Մենք գիտումք կանգ առանք Շտիրների վրայ, շեշտելու համար այն ծայրայեղ մինչև աբսուրդ հասցրած եղրակցութիւնները, որ անում են անարխիզմի քարողիչները անհատական սկզբունքից:

Ի՞նչպէս է վերաբերում դէպ այդ գաղափարները տղատամիտ—ուամկագար հոսանքը, որի մի հատւածն է հանդիսանում և Հայ Փողովրդական Կուսակցութիւնը, մրգիօք նա միանգամայն ժխտում է անհատական ըսկզբունքը, թէ միմիտյն որոշ չափով է ընդունում:

Մեր ուղղութեան ներկայացուցիչները գիտակցում են անհատականութեան հասարակական արժեքը, որի երկրպագուներն են եղել մտքի հսկաներ Աղամ Սմիտը և պատմաբան Կարլէյլը, որոնք երբէք անիշխանականներ չեն եղել. անհատի ազատութիւնը և նրա իրաւունքների պաշտպանութիւնը տնտեսական, հասարա-

կական և քաղաքական ասպարեզնէրում ընդունելի են որոշ սահմանափակումներով, այսքան, մինչև ոք նրանք չեն վկասում անհատից բարձր կանգնած հասարակական միաւորութիւնների գոյութեանը և բարգաւաճմանը, ինչպէս են ազգը և պետութիւնը, ուրոնցից կախւած է և հէնց իրեն անհատի բազգը: XIX դարի վերջում, այսինքն մօտ մի զար յետոյ, լիբերալիզմը մեղմացրեց նախկին իր քարոզած անհատականութիւնը, զեղջելով որոշ չափով պետական և գեմուկրատական մի շարք ոկրունքների, աչքի առաջ ունենալով կեանքի զարգացումը. լիբերալիզմը չգնաց անիշխանութիան ուժանթիկ և ցնորամիտ ինքիվիզուալիզմի ետևից, այլ ձեռք մեկ նեց գեմուկրատիզմին, ուամկավարութեանը:

Այժմ բոլոր երկների և ազգերի աղատամիտ—ուամկավար ուղղութիւնը, ինչպէս և մեր կուսակցութիւնը, իրանց ծրագիրների մէջ, քաղաքացի-

ների իրաւունքներին վերաբերող բաժնում ըստն ասպարեզ ևն տալիս անհատի իրաւունքներին և նախաձեռնութեան, պահոնջելով խղճի իրարի, ամսութի, ժողովների և կազմակերպութիւնների աղատութիւնն, սակայն դրա հետ միաժամանակ նրանց պաշտպան են կանգնած աղբային և պետական սկզբունքներին:

Անիշխանութիւնը ոչ միայն մի շաղթ սոցիալ-ֆիլիսոփայական սխալներ է գործում, օրինակ՝ մարդկային բնութիւնը ընդունում է աւելի բարի և լաւ քան է, ինչպէս հաստատուած է դիտութեան կազմից. այլէ չափազանց մըսակար է հանգիստում քաղաքական կեանքի մէջ: Հեղինակների կարբինեաներից գուրս գալով աղմկալից հրապարակները, նու ընդունում է այլանդակ ձևեր, ջնորիւ իր ընդունած քարողելու միջոցին Պատուիթ-ին, տերբորին:

Անիշխանութիւնը, ոչ այնքան իրեւ զաղափարական շարժում, այլ որպէս

քաղաքական գործունէութիւն: քանդակի է հանարակութեան և պետութեան հիմունքները:

Եեր իրականութեան մէջ քաղաքական անիշխանութիւնը աղաւազուած արտայայտութիւն է գաել ըուղկիների պրոպագանդի և անդուսպ գործունէութեան մէջ: և նրա վանդաւոր և այլասեռող հետեւանքները պարզորէն երևացին աշխարհի առաջ Ռուսաստանի ողբերգական զբութիւնից: Անհատի իրաւունքների անսահման և բացարձակ զերիշխանութիւնը մութ մասսաների շարքերում քարու քանդ արեց պետութիւնը, զրկեց հասարակութեանը ուժեղ իշխանութիւնից, իսկ անհատին, քաղաքացուն՝ աաբրական իրաւունքներից և անձնական ապօհովութիւնից:

Անիշխանութեան քայլայիչ նետքեր մենք գտնում ենք նաև Հայ Յեղ, Դաշնակցութեան ձախ թեր՝ այսպէս կոչուած «աշխատաւորականների» ան-

պատասխանառու գործունէութեան
մէջ:

Այդ ծայրայեղ դադախաբների վը-
տանքաւոր և անժամանակ իրագործ-
ման ծանր հետևանքները արդասիք
են այն բանի, որ նրանք անտես են
անում ժամանակի և տարածութեան
բարդ պայմանները: *)

III

Եթէ ազատամիտ ռամկալար ուղ-
ղութիւնը և նրա հետ միասին և մեր
կուսակցութիւնը չի ընդունում անիշ-
խանականների քարոզած ու ծայրա-
յեղութեան հասցրած անհատական
սկզբունքը, նա նմանալիք ժըն-
տում է և զասակարգային աշխար-
հայեցքը, որ գաւանում են ձախ կող-
մից սօցիալիստական կուսակցութիւն-
ները, իսկ աջից պահպանողական ու

*) Անարխիզմի մասին տես Դր. Պ.
Էլ्यցբախը՝ անարխիզմ ուսու. թարգմ.
Մոսկվա 1907 գոյութիւն ունի մեծ
գրականութիւն:

յետաղիմական հոսանքները: Դրանք
խոշոր նշանակութիւն են տալիս դա-
ստակարգին, նրա իբաւունքների և շա-
հերի պաշտպանութեան:

Սօցիալիստների դասակարգային
տեսակէաը իր կլասսիկ արտայայ-
տութիւնն է գտել Կ. Մարքսի կազ-
մած և 1848 թ. հրատարակած «Կոմ-
մունիստական մանիֆեստ» մէջ, որի
հէնց առաջին երեսին կարդում ենք՝
«Մինչ օրս գոյութիւն ունեցող ամեն
մի հասարակութեան պատմութիւն
հանդիսացել է որպէս զասակարգերի
պայքարի պատմութիւն, աշատը և
ստրուկը, պատրիցին և պլեբէյը, կար-
ուածատէրը և ճորտը, արհեստաւորը
և ազակերտը, մի խօսքով՝ հարստահա-
րովը և հարստահարուածը միշտ հա-
կառակ են եղել միմիանց և որպէս
թշնամիներ պայքարել են բաց թէ
գաղտնի կերպով միմիանց դէմ...
Նախական պատմական ժամանակա-
շրջաններում համարեա թէ ամենու-
րեք մենք ահսնում ենք հասարակու-

թիւնը անգամահատուած դասերի և
զանազան ստորարաժանութեարի... Իսկ
այժմեան բուրժուական ժամանակա-
շրջանը բնորոշուում է նրանով, որ
դասակարգային հակազրութիւնները
դարձել են պարզ, ամբողջ հասարա-
կութիւնը քանի դնում աւելի և բա-
ժանուում է երկու խոչոր միմիանց գէմ
կտնդնած գասակարգերի՝ բուրժուա-
զիա և պրօլետարիատ»:

Սակայն այժմեան կազիտալիստա-
կան տնտեսութեան (որի հիմքն է
կազմում մասնաւոր սեփականութիւ-
նը) բնական զարգացումը տանում է
գէպի նրա և անխուսափելի կործա-
նումը և պրօլետարիատի յազիւ-
թիւնը»:

Դասակարգային պայքարի գաղա-
փարը նոր չէր եւրոպայի համար: Դեռ
XIX-րդ դարի սկզբում զրաֆ Սէն-
Միժնը քարոզում էր այդ, սակայն
առաջին անգամ ուժեղ արտայայտած
և մի ամբողջական գիտական սխուե-
մայի վերացած մենք տեսնում ենք

1006
28417

Կ. Մարքսի ուսմունքի մէջ:

Այնուհետև մէծ ուսուցչի լաւագոյն
աշակերտները՝ Փրանսիացի Դէքը,
զերմանացի Կառուցկին, ուստի Պիեխա-
նովը և շատ ուրիշները, զարգացրին
զասակարգային տեսակէտը, իսկ նրա
բազմաթիւ հետեւորդները գործադրե-
ցին այն կեանիքի մէջ, մղելով դուսա-
կարգային կամք բուրժուազիայի դէմ:

Զափաւոր և ծայլայնդ սօցիալիս-
տական բազմաթիւ հոսանքների զա-
ւանած ոցեալ-փիլիտոփայական աշ-
խարհայեացըբի առանցքն է կազմում
զասակարգի զաղափարը և այդ գա-
զափարի շուրջն է պատում ամե-
նոյն ինչ: Դասակարգային տեսակէ-
տից են մօտենում և լուսաբանում
ամենայն մի երեսյթ, ոչ միայն պատու-
մութիւնն է հանդիսանում դասակար-
գային կոռու ասպարէզ, այլև պիտու-
թիւնը ըստ էութեան դասակարգային
է, միջնադարեանը եղել է աւատական,
այժմեանը կապիտալիտական-բուր-
ժուական, ինչ առաջնայն հասարակու-

թեանմէջ պիտութիւնը լինելու է սօ-
շիալիստական (անդասակարգային):

Բացի պիտութիւնից, հայրենիքը
կըօնը, գիտութիւնը, գրականութիւնը,
գեղարուենուը, մի խօսքով ամբողջ
կուլտուրան պատմական զանազան
ժամանակաշրջաններում արտայայ-
տում է դասակարգերի ձգտութերը
ու գաղափարները. որպնք կրում են
իրենց մէջ դասակարգային էութիւնը
Այժմեան կուլտուրան բուրժուական
է և անխուսափելիօրէն մահուան է դա-
տապիտըրւած, ներկայ հասարակու-
թեան զամանակերից միմիացն պրո-
լետարիան է առագայում գալիք
կուլտուրայի ստեղծագործողը. և այդ
կուլտուրայի ու առաջայ հասարակու-
թի ստղմերը այժմ իսկ նկատում են:

Ուրեմն, զոյութիւն ունեցող դասա-
կարգերից սօցիալիստաները պաշտպա-
նում են միմիացն սեփականագույրկ և
իրաւագուրկ պրոլետարիատի ջահերը.
որ այժմ ճնշում և թոյլ է, սակայն
որին պատկանում է առաջան, ուօտ ի-

և նըանք ուզզութիւնն տալիս պրօ-
լետարիատի քաղաքական պայքարին,-
ուշխառիլով համաձայնացնել այդ տն-
տեսական զարգացման հետ:

Այդ տեսակէտից ենինով, սօցիա-
լիստական կուսակցութիւնները քա-
րոզում են դասակարգային կոուք ան-
հրաժեշտութիւնը, որում են դասա-
կարգային գիտակցութիւնը և ստեղ-
ծում անհաջտ յարաբերութիւններ:

Անհատական և ազգային սկզբունք-
ներին նրանք հրորդական տեղ են
տալիս:

Դասակարգային աջակողմեան կու-
սակցութիւնների վրայ մենք կանդ
չենք առնում, որովհետեւ նրանք բա-
ցարձակ կերպով դասակարգային դա-
տանանք չեն քարոզում, գոհ են ներ-
կայ կացութիւնից, ապագային վերա-
բերեալ իդէալներ չեն ստեղծել և լայն
գաղափարական շարժում առաջ չեն
բերել: Սակայն ըստ էութեան նրանք
պաշտպանում են կալուածատէրերի և
խոշոր կապիտալիստների շահերն ու

իրաւունքները:

յունչ ունի ասելու գասակարգային
աշխարհայեացքի և ուսուակէտի գէմ
ազտտամիտուամկավար հոսանքը և
մասնաւորապէս Հայ ժողովրդական
կուսակցութիւնը: Ի՞նչպէս պէտք է
հասկանալ նրա ապագասակարգային
բնաւորութիւնը, արդեօք ժխտում է
նա գասակարգերի գոյութիւնը և նը-
րանց պահանջները, թէ միմիտյն ան-
ընդունելի է համարում գասակար-
գային սկզբունքը. վերջապէս կարելի
է ապագասակարգային լինել և այդ
դէպքում ինչպէս պէտք է վերաբեր-
ւել գասակարգային կուսակցութիւն-
ներին:

Այս հարցերին պատասխանել, նը-
շանակում է շօշափել մեր ուղղութեան
քաղաքական գաղափարները, որոնց
և մենք դիմում են այժմ:

IV

Դ Ազտտամիտուամկավար (լիբերալ
գմոկրատիկ) ուղղութեան կուսակ-
ցութիւնները ընդունել են իրանց սօ-

ցիալ վելիսովիայական աշխարհայեաց-
քի հիմք ազգի և բովանդակ ժողո-
վովի դադափարը, իսկ գործունէու-
թեան հիմք ազգի և ժողովրդի իրա-
ւունքների ու կուլտուրայի պաշտպա-
նութիւնը:

Անգլիական լիբերալները, ամերի-
կական, գեմոկրատները, փրանսիա-
կան ուգլիկալները, գերմանական ա-
զատամիաները, ռուսական կադէտները
և հայ ժողովրդականները զանազան
ազգային հասուածներն են այդ խո-
շով միջազգային քաղաքական հոսան-
քի:

Սըանք ընդունում են անհատը և
դասակարգը որպէս գոյութիւն ունե-
ցող հասարակական երևոյթ, որպէս
փաստ, սակայն չեն դարձնում աշ-
խարհայեացքի և գործունէութեան
հիմնագար, ինչպէս այդ անում են
անարխիստներն ու սօցիալիստները:

Սըանք պաշտպանում են մարդ ան-
ցատի և զանազան գասակարգերի այն
իրաւունքները, որոնք չեն գնում ընդ-

դէմ համայն ժողովրդական և պետական սիզբունքներին, պաշտպանում են անհատի և գասակարգերի շահերը այն աստիճանն, որքան որ դրտնք չեն զսասում ընդհանուր ազգային տնտեսութեան հիմունքներին:

Ուրեմն ազատամիտ ազգայինները կամ ժողովրգականները ընդհանուրի բարիքը, ազգային և պետական բարիքը բարձր են զասում անհատական և գասակարգային շահերից:

Ելնելով այդ հիմնական գաղտափարից ազատամիտ ազգային ուղղութիւնը այն աեսակէտն ունի, որ պատմութիւնը, հանդիսանում է ժողովրդների և ազգերի պատվութիւն, այլ ոչ գասակարգային պայքարի դատմութիւն, ինչպէս կարծում են սօցիալիստները կում անհատի ազատագրման պատմութիւն, ինչպէս համոզուած են անհատականները: Մարդկութեան պատմութեան ընթացքում առաջնակարգ գործոն է հանդիսանում ազգը, ժողովուրդը և նրա քաղաքա-

կան կազմակերպութիւն պետութիւնը: Հստ մեր ուղղութեան, պետութիւնը ժողովրդի և ազգի (մենք տարբերում ենք ի հարկէ այս երկու գաղափարները) քաղաքական կազմակերպութեան արտայայտութիւնն է, նրա ինքնապաշտպանութեան օրգանն է: Զանազան պատմական ժամանակաշրջաններում մեղ յայտնի պետութիւնները ներկայացնում են իրանցից ազգային խոշոր քաղաքական մարմիններ: Զարաչար սխալում են սօցիալիստները, երբ իւրաքանչիւր պետութիւն համարում են գասակարգային և մտքի աբերացիայի են ենթարկում անարխիստները, երբ բացարձակութէն ժխտում են պետութեան գաղափարը և ձգտում են կործանել պետութիւնը, սահմանելով այն անհատի տեսակէտից զնանակութեան և յետադրմական:

Նմանապէս և դիտութիւնը, դրականութիւնը, գեղարւեսութը, մի խօսքով ամբողջ հոգնոր կուլտուրան, ըստ

մեր տեսակէտի; ոչ այլ ինչ է, եթէ
ոչ լայն ասպաքէզ, ուր ժողովուրդները
հանդէս են բերում իրենց ազգային
ամբողջ հոգեկան առանձնայատկու-
թիւնները: Իւրաքանչիւր ազգի հո-
գեոր կուլտուրան արտայայտութիւն-
է ժողովրդական ոգու ստեղծագոր-
ծութեան:

Սօցիալիստները քարոզում են, թէ
չկայ միատարր ժողովուրդ, թէ ազգը
բազկացած է դասակարգերից, ուստի
և ամբողջութիւն չի կազմում, իսկ
այդ գաղափարները քարոզութեան-
սկզբնական շրջանում բացարձակ
կերպով յայտարարում էին, թէ պրո-
լետարիատը ազգութիւն և հայրենիք
չի ճանաչում, որ դրանք բուրժու-
տիկան գաղափարներ են, որոնցից
պիրութարիատը պիտի խուսափի: Եւ
նրանք 1864 թ. ձեռք զարկեցին դա-
սակարգային ինտերնացիոնալի հիմ-
նաւորման:

Արգեօք ճիշտ է այդ, ճիշտ է, որ
ազգութիւնը և հայրենիքը չնչին-

նշանակութիւն ունցող գործոններ-
նն, թէ ընդհակառակ, ազգային բո-
գազմունքն ու միտքը հայրենիքի
գաղափարը այնքան հին է, որքան և
ինքը մարդկային հասարակութիւնը:
Ազգայնութեան առաջազոյն յատ-
կանիշը՝ լեզուն ու ծագում այնքան
խոշոր նշանակութիւն ունի, որ միեւ-
նոյն ազգի դաստիարակը աւելի են
շփոթւում և կապւում միմիանց, քան-
դանազան ազգերի միենոյն դաստ-
կարգերը:

Ազգութեան ամբողջութեան նպաս-
տում է և ընդհանուր անցեալը, պատ-
մութիւնը և ժամանակակից ընդհա-
նուր հասարակական կեանքը, որին
հաւասարապէս մասնակցում հն դա-
սակարգերը, այդ ամբողջութիւնը նը-
պաստում են ընդհանուր տնտեսական
և քաղաքական պայմանները, որոնց
մէջ ազգում են նրտնք, մի ընդհա-
նուր ընական շրջապատը՝ հայրենիքը,
ինչպէս և հասարակական և կուլտու-
րական բարիքների միասնակի ստեղ-

ծագործումը և համերաշխ դործակ-
ցութիւնը:

Արտաքին դէպքերի հանդէպ, մի-
ջազգային յարաբերութիւնների ժա-
մանակ նմանապէս ժողովուրդները
հանդես են գալիս որպէս արողջու-
թիւններ, և այդ մենք տեսնում ենք
թէ անցեալում և թէ ներկայումս:
Խաղաղ ժամանակ ազգերի, պետու-
թիւնների միջև կնքում են առե-
տրական դաշնագրեր և հաստատում
են անտեսական յարաբերութիւններ.
Նոյնիսկ պատերազմի ժամանակ ազ-
գեր հանդէս են գալիս, որպէս միա-
ւորութիւններ յանձին իրանց պետու-
թիւնների. Հէնց 1915 թ. գերմանա-
կան արշաւանքի միջոցին բերդիացիք
հարուստ թէ չըաւոր, մեծ թէ փոքր
տուժել են միահաւասար, որպէս մի
ազգաւթեան զաւակներ և Անդիան
քառաներ կըեց որպէս մի ազգութեան
պետութիւն:

Ազգի ներքին կեանքի մէջ, նրա
զանազան զասակարգերի յարաբերու-

թիւնների մէջ մենք նկատում ենք
նոյնը, որ ազգութիւնը չի դադարում
մի ամբողջութիւն լինելուց: Եթէ զա-
նազան դասակարգերի տնտեսական
զաները և քաքարեական պահանջները
երկար ժամանակ անբաւարար են մը-
նում, կամ թէ անժամանակ և ծայ-
րայեղ ձայնով են իրագործում, չա-
փազանց զնանակար կերպով են ան-
դրադառնում միենոյն ազգութեան
հասարակական և պետական օրգա-
նիվմի կեանքի, օրինակ բանւորների
օրւայ աշխատանքի ժամերի չափա-
զանց կրճատումը քայլայում է ժո-
ղովրդական տնտեսութիւնը, ինչպէս
և այդ աշխատանքի ժամերի չափա-
զանց երկարատեսութիւնը, որը ձբգ-
տում են պահպանել կապիտալիստնե-
րը, զնանում է ժողովրդի լայն խա-
ւերի լուսաւորութեան գործին և խո-
չընճոտ է յարւցում պետութեան
յառաջադիմութեան:

Ազգային տնտեսական և պետական
քաղաքական կեանքը, որից կախած

է զանազան դասակարգերի ինչպէս և
ամենայն մի անհատի բաղդը, ընթա-
նում է միջին ճանապարհով, որին և
անհրաժեշտ է հետեւել:

Երկար ժամանակ մոռացուած և ա-
մօթխածութեամբ ծածկուած ազգո-
յին զգացմունքը այժմիան համաշ-
խարհայն պատերազմի ժամանակ
հրարխային ոյժով հանգէս եկաւ հէնց
իրանց սօցիալիստների շարքերում,
բաւական է յիշել միջազգային սօցիա-
լիզմի և ինտերնացիոնալի աւան-
դարդ գերանական օրթօդօքս սօ-
ցիալ-դեմոկրատիայի գործելակերպը
և նրա ականաւոր զեկավարների ան-
կեղծ հայրենասիրական վարմունքը,
որպէսզի խորապէս համոլուել, որ
ազգային զգացմունքը ամենաուժեղ՝
աղնիւ և վսեմ զգացմունքներից
մէկն է:

Հետաքրիւ է, որ զանազան երկը-
ներում սօցիալիստական կուսակցու-
թիւնների ծոցում առաջ են գալիս
չափաւոր հոսանքներ, որոնք աստի-

ճանաբար թողնում են հին ուղի-
ները, և սկսում են ժողովրդի ամբող-
ջութեան գաղափարը բարողել դասա-
կարգերի համերշտխութեան հետեւել,
այդպէս են վարւում ֆրանսիական
պօսսիբիլիստները, անգլիական բան-
ւորները, իտալական բեֆօրմիստները,
գերմանական բեվիզիօնիստները և
այլն.

Մայրայնութեան հասցրած ամե-
նայն մի գաղափար, տեսակետ առաջ
է բերում ուժեղ ոչակցիա-յեղաշար-
ժում: Աբսուրդի հասցրած անիշխա-
նականների անհատականութիւնը և
սօցիալիստների նեղ ստամոքսային
գասակարգայնութիւնը ստեղծել են
խիստ հակառակորդներ յանձին զա-
նազան երկրներում գործող ազատա-
միտ ժողովրդական կուսակցութիւնների:

Եւ անհատականների հայրենիքի,
Մակային և այլոց, «Էգօիստների
Միութեան» ու սօցիալիստների դա-
սակարգային ինտերնացիոնալին մեր

ուղղութիւնը հակադրում է ազգերի իրաւահաւասարութեան և ժողովութշների միութեան կիգայի գաղափարը, որի ամենափայլուն արտայայտիչն է հանդիսանում միացեալ Նահանգների պրիվինդնեատ Վիլմոնը:

Բնութեան հիմնական օրէնքները, մարդկութեան գարաւոր պատմութիւնը, գիտութեան մեծ նուաճութեները և ժողովրդապետութեան արդար սկզբ- րունքները գարելի վկաներ են, որ մեր Հայ ժողովրդական Կուսացու- թեան գաւանած ազգային և ապահա- սակարդացին գաղափարներն ու աշ- խարհանացքը անժխտելի ճշարտու- թիւններն են:

V.

Առաջադէմ մարդկութեան լուսաւոր հոգու սաեզծած այդ երեք և հիմնա- կան աշխարհանայեացը, և սերունդ- ների ջանքերով կազմակերպուած ե- րեք խօշոր քաղաքական հոսանքները՝ անարիխիզը սոցիալիզմը և լիբերա- դիմոկրատիզմը, որոնց համառօտ ան-

սութիւնը մինք աշխատեցինք տալ- ունեն իրենց համապատասխան ներ- կայացուցիչները հայ իրականութեան մէջ:

Անհատականներ գոյութիւն ունեն որպէս անձնաւորութիւններ, որոնք ոչ գրականութեան մէջ ոչ էլ քաղա- քական կեանքում կազմակերպուած հանդէս չեն եկել: Կան անիշխանա- կաններ, որոնք ասպարեզ են գոել գործելու բօլշեվիկական հոսանքի շար- քերութ:

Դասակարգային գաղափարներ և կազմակերպութիւնն ունեն փոքրա- թիւ բայց կօմպակտ սօցիալ-ընկամո- կրանները և սօցիալ-յեղափոխականները, որոնք մեր հայքենքում չնոր- դիւ պրոլետարիների բացակայութեան գեռ հրկար ժամանակ աջողութիւն չեն ունենալու:

Դժուարութեան ենք հանդիպում, երբ կամենաւմ ենք բնօրոշել Հայ Ծե- ղափոխական Դաշնակցութիւնը և նրա տեղը որոշել յիշատակոծ երեք հոսան-

քների մէջու Նա անհասկանալի երկդիմութիւն է քարոզում, հանդիսանալով քաղաքական Եանուաւ Նրա աջ թիւի ազգայնութիւնը երբեմն շատ հետութեամբ փոխուում է շովինիզմի, իսկ ձախի գասակարդային սոցիալիստական աշխարահայեցքը աննկատելի հարեանութիւն է հաստատել բոլշևիկական անարխիզմի հետ:

Զարմանալի է, թէ ինչպէս այդ հակոտնեայ գաղափարների և ուղղութիւնների կենակցութիւնը գոյութիւն ունի մի խոզոր և առգեցիկ կուսակցութեան մէջ, գուցէ դա ըացարւի մեր քաղաքական և կուտարական հիետամեացութեամբ, ինչպէս և անհրաժեշտ գիֆերենցիալի բացակայութիւնից, որին դեռ սպասում ենք:

Յամենայն դէպս Դաշնակցութեան այդ երկդիմութիւնը չափազան մեծ վնաս է հասցնում հայ ժողովրդին, մի կողմից պատւաստելով հայ քաղաքացուն խառնաշփոթ աշխարահայեցք և

թիւը գաղափարներ, իսկ միւս կողմից վարելու երբեմն էլ հակազգային բոլշևիկական քաղաքականութիւն:

~~Քաղաքականապէս~~ և անհսապէս հետամինաց և անփառունակ հայ իրականութեան մէջ միմիայն Հայ Ժողովրդական Կուսացութիւն է յայտարարել իրան աղատամիտ ազգային ժողովրդական սկզբունքները դաւանող կուսակցութիւն: Հայ Ժողովրդական կուսակցութիւնը ձգտում է հայ քաղաքացու սրտում վառ պահել առողջ տղթային զգացմունքը, աղատամիտ ազգային միավը, նու ձգտում է տարածել հայ ժողովրդի մէջ մարդկութեան լուսաւոր և առողջ պետականութեան գաղափարները, աշխատում է միջոցներ տալ հայ ազգային առանձնայատուկ ստեղծագործական ողին արտայայտել, և ուրոյն ազգային գէմքը պահպանել, նա զարկ է տալիս հայ պետական մաքին և աղջային պետական անկտիսութեան, միաժամանակ նա ձգտում է բարի յարա-

բերութիւն պահպանել գրացի ժողովրդների, պետութիւնների և հայ ժողովրդի միջն, Հայ ժողովրդական Կունամզութիւնը ձգտում է արդարացնել հայ ազգի լաւագոյն զաւակ՝ Ստեփանոս Նազարեանի յայտարարութիւնը ստիեզերական մարդկութեան մէջ հայութեան մեծ կոչումն է սեփականել իւրեան եւրոպական կրթութիւնը և լուսաւորութիւնը և տանել ու տարածել նրան ասիական մարդութեան մէջու

Յովհ. Ստեփանեան

ՀՀ Ազգային գրադարան



NL0201709

ԱԼՔՔՈՆԴՐԱՊՈՂՈՎԱՄ ՀԱՅ. ԺՈՂ. ԿՈՒՍ.
ԲԻՒՐՈՑՈՒԽԾ (ԱԼՔԱՄԱՆԴՐԵԹԱՆ ՓՈՂ.)
կարելի է ստունալ հետեւեալ հրատա-
րակութիւնները:

1. Մրագիր Հ. Ժ. Կ.
2. Ձեմստվօն Հայաստանում 50 կ.
3. Մեր հողային ծրագիրը 50 կ.
4. Հայաստանի տնտեսական
հեռանկարները 2 լ.
5. Հերցունքներ 4 լ.
6. Ազգային երկու մեծութիւններ 50 կ.

